ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 9-Ա

«19» մարտի 2020 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ՅՕ 2621>> ՄԱԿՆԻՇԻ 66667 ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐՈՎ ԷՔՍԿԱՎԱՏՈՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների դրույթներով և գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի փետրվարի 26-ի N 12262022 շարժական գույքի գնահատման հաշվետվությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի սեփականությունը հանդիսացող << ՅՕ 2621>> մակնիշի 66667 գործարանային համարով անսարք էքսկավատորը օտարել աճուրդով:

2. Աճուրդի դրված գույքի համար սահմանել մեկ լոտ:

3. Հիմք ընդունելով որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի որոշման վերաբերյալ «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի փետրվարի 26-ի N 12262022 շարժական գույքի գնահատման հաշվետվությունը լոտի համար մեկնարկային գինը հաստատել 323000 (երեք հարյուր քսաներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Հաստատել աճուրդի կանոնակարգը և աճուրդի մասին հրապարակային ծանուցման հայտարարության տեքստը համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

5. Աճուրդը կազմակերպելու նպատակով՝

ա) ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

Վարդան Մակեյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար.

հանձնաժողովի անդամներ՝

Գևորգ Սալնազարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավարի տեղակալ,

Արմեն Պետոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ- ֆինանսիստ,

Նորայր Առաքելյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

Գուրգեն Արևիկյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու անդամ,

Վարդան Կարապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու անդամ:

բ) աճուրդավար հաստատել հաննաժողովի անդամ, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ֆինանսիստ՝ Արմեն Պետոյանին, արձանագրող՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝Նորայր Առաքելյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

ԳՈՒՐԳԵՆ ԱՐԵՎԻԿՅԱՆ՝ կողմ ----------

ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ կողմ ----------

ՍԵՐՅՈԺԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ կողմ ----------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԳԵՎՈՐԳ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

<< 19 >> մարտի 2020 թվական
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Փանիկի համայնքի ավագանու 2020 թվականի
մարտի 19-ի թիվ 9-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԷՕ 2621>> ՄԱԿՆԻՇԻ 66667 ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐՈՎ ԷՔՍԿԱՎԱՏՈՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի սեփականությունը հանդիսացող << ԷՕ 2621>> մակնիշի 66667 գործարանային համարով էքսկավատորի /այսուհետև գույք/ աճուրդի միջոցով օտարման աճուրդային հանձնաժողովի գործունեության կանոնները:

2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի սեփականությունը հանդիսացող <<ԷՕ 2621>> մակնիշի 66667 գործարանային համարով էքսկավատորը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 9-Ա որոշմամբ ստեղծված աճուրդային հանձնաժողովը՝ հետևյալ անհատական կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

Վարդան Մակեյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար.

հանձնաժողովի անդամներ՝

Գևորգ Սալնազարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավարի տեղակալ,

Արմեն Պետոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ- ֆինանսիստ,

Նորայր Առաքելյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

Գուրգեն Արևիկյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու անդամ,

Վարդան Կարապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու անդամ:

3.Հանձնաժողովը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի սեփականությունը հանդիսացող <<ԷՕ 2621>> մակնիշի 66667 գործարանային համարով էքսկավատորը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 9-Ա որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

II . ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդը անցկացնել սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

5. Աճուրդը անցկացնել 2020 թվականի ապրիլի 15-ին, ժամը 11^{00}-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ գյուղում՝ համայնքապետարանի շենքում /հասցեն՝ Փանիկի համայնք 2-րդ փողոց, շենք՝ 43/:

6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակել նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

7. Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրել աճուրդի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

8. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

9. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1/ աճուրդային հանձնաժողովի անդամները /աճուրդի կազմակերպիչ/,

2/ համայնքի ավագանու անդամները,

3/ աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:

10. Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 /երկու հազար/ դրամ:

11. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք (Դիտորդ), ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը:

12. Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար (Դիտորդ) մուտքի տոմսի վճարը սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

12. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձիք (Դիտորդ), աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

13. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն պայմաններով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ՝ բացառությամբ ընդհանուր աճուրդի դեպքում լոտերի աճուրդների միջև ընկած ժամանակահատվածի՝ աճուրդավարի թույտվությամբ,

5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

14. Աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը հաստատված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 19-ի թիվ 9-Ա որոշմամբ, համաձայն որի՝ աճուրդի դրված գույքի /մեկ լոտ/, մեկնարկային գինը սահմանված է 323000 (երեք հարյուր քսաներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

15. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, գումարով՝ 16150 /տասնվեց հազար հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

16. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, գումարով՝ 16150 /տասնվեց հազար հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

17. Աճուրդի նախավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին՝ աճուրդի անցկացման օրը:

18. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնային առաջարկ:

19. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում 2020 թվականի մարտի 23-ից մինչև աճուրդի կայացման նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքում /հասցեն՝ 38-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 4/ :

20. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Փանիկի համայնքապետարանում՝ 2020 թվականի մարտի 23-ից մինչև աճուրդի կայացման նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն:

21. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ) իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցել աճուրդին:

22. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները և աճուրդի հաղթող մասնակիցը:

23. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

24. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

25. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայանագիրը չկնքելու և /կամ/ գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

26. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից:

27. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

28. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Փանիկի համայնքապետարանում աճուրդային հանձնաժողովի կողմից 2020 թվականի մարտի 23-ից մինչև ապրիլի 2-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9:00-ից մինչև 18:00-ն:

29. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,

2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

4) նախավճարի և աճուրդի մասնակցության վճարի մուծման անդորրագիրը:

30. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

31.Աճուրդում վաճառված գույքի նկատմամբ իրավունքները պետական գրանցման ենթակա չեն:

32. Աճուրդը համարվում է չկայացած եթե.

1) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:

2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

3) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:

33. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

34. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդից ոչ ուշ քան 15 օր հետո: Կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

35. Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

36. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

III . ԱՃՈՒՐԴԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

37. Աճուրդային հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

38. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

39. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

40. Աճուրդավարը և արձանագրողը հաստատվում են աճուրդի կազմակերպչի որոշմամբ:

41. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ՝ ԳԵՎՈՐԳ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

<< 19 >> մարտի 2020 թվական
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Փանիկի համայնքի ավագանու 2020 թվականի
մարտի 19-ի թիվ 9-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԵՕ 2621>> ՄԱԿՆԻՇԻ 66667 ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐՈՎ ԷՔՍԿԱՎԱՏՈՐԸ. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏ

1. Աճուրդի կազմակերպչ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնք:
2. Աճուրդի դրված գույք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի սեփականությունը հանդիսացող << ԵՕ 2621>> մակնիշի 66667 գործարանային համարով անսարք էքսկավատոր:
3. Աճուրդը կայանալու է 2020 թվականի ապրիլի 15-ին, ժամը 11ՈՐ-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի շենքում /հասցեն՝ Փանիկի համայնք 2-րդ փողոց, շենք՝ 43/:
4. Աճուրդի ձևը՝ դասական աճուրդ:
5. Աճուրդի դրված գույքի մեկնարկային սահմանված է 323000 (երեք հարյուր քսաներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
6. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, գումարով՝ 16150 /տասնվեց հազար հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:
7. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, գումարով՝ 16150 /տասնվեց հազար հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:
8. Աճուրդի նախավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին՝ աճուրդի անցկացման օրը:
9. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում 2020 թվականի մարտի 23-ից մինչև աճուրդի կայացման նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքում /հասցեն՝38-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 4/ :
10. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Փանիկի համայնքապետարանում՝ 2020 թվականի մարտի 23-ից մինչև աճուրդի կայացման նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն:
11. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝
    1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,
    2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,
    3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող

փաստաթուղթը,

4) նախավճարի և աճուրդի մասնակցության վճարի մուծման անդորրագիրը:

12. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնային առաջարկ:
13. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

Մանրամասների համար զանգահարել 094-134208, 093-353638 հեռախոսահամարներով կամ դիմել Փանիկի համայնքապետարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԳԵՎՈՐԳ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

<< 19 >> մարտի 2020 թվական
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ